

–Անհոգ եղիր, կ'ըսե, եւ Տիկին Շ...ին մեկնելէն անմիջապէս ետքը փողոց կը վազէ՝ իւր ծանօթներուն աւետիս տալու:

Բայց իրա՞ւ է, որ Փ...ին կինը Ջ...ին էրիկը կսիրէ. քաւ լիցի... մեծ սուտ մ'է... արդէն Փ...ին կինն իւր էրիկն անգամ չսիրէ: Փ...ին կինն օր մը այս լուրը ստեղծող տիկինին շրջագգեստն դիպուածով կոխած էր եկեղեցւոյն մէջ եւ զայն քիչ մը պատռած էր. այդ տիկինն ալ Փ...ին կինէն վրէժ լուծելու համար՝ ասանկ արատ մը քսելու ելած էր անոր վրայ:

Բերայի գեղեցիկ սեռին վրայ աւելի խօսիլն աւելորդ կհամարինք, քանի որ ըսինք, թէ հայելիին առջեւ միայն կեանք կ'անցունէ. այսչափը բաւական է, այսչափը շատ իսկ է:

Ամառուան եղանակին մէջ այս թաղին մէջ ջուր չգտնուիր, եւ թաղեցին կստիպուի առանց ջուրի անցունել... իւր օդին:

Օդն աղէկ է, բայց կերելի որ ամառն օդ ալ չգտնուիր. վասնզի հարուստները գեղերը կ'երթան օդ առնելու:

Բերայի մէջ հայու ո՞րչափ տուն կայ. այս հարցման այն ատեն կրնանք գոհացուցիչ պատասխան տալ՝ երբ օրինաւոր վիճակագրութիւն մը ըլլայ: Առանց այս վիճակագրութեան սպասելու ինչ որ ըսենք՝ վաւերական չպիտի համարուի, մանաւանդ թէ այս մասին կարծիքները համաձայն չեն: Ոմանք կկարծեն, թէ Բերայի մէջ երկու հազար հինգ-հարիւր տուն կայ. ըսողներ ալ կան, հազար հինգհարիւր է Բերայի տուններուն թիւը... Չափազանցութիւն, չափազանցութիւն... չափազանցութիւն... իմ կարծիքովս հազիւ երեք տուն հայ կայ Բերայի մէջ...

ԺԴ.

ՊԱԼԱՍ

Մայրաքաղաքիս թաղերուն առաջինը կը համարուի, երբ աժան գնով բանջարեղէն կամ պտուղ ծախու առնելու վրայ է խնդիրը. փա՛ռք հրեայ ազգին. բուսային ուտելիքն շատ վար գնով կը վաճառուի հոս: Բայց միայն Պալատցին օգուտ կքաղէ այս աժանութենէ. որովհետեւ Բերացին կամ Իսկիւտարցին կաղամբ կամ խնձոր գնելու համար Պալատ չկրնար երթալ, ինչպէս որ ես ալ Ամերիկա չեմ երթար սնտուկ մը կազ գնելու համար:

Այս թաղին մէջ կայ քարուկիր մեծ եկեղեցի մը: Այդ քարուկիր շէնքին անունն է *Հրեշտակապետ*, որ ինչպէս յայտնի է՝ մահկանացուներուս հոգիները կ'առնէ եւ որ, ինչպէս յայտնի չէ՝